ГРИГОР ГРИГОРЯН

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТРАХОВАНИЯ ИМУЩЕСТВА ПО ДАННЫМ 2 КРУПНЕЙШИХ СТРАХОВЫХ КОМПАНИЙ АРМЕНИИ

Ключевые слова: *страхование имущества, ОАО «Росгосстрах-Армения», ЗАО «Инго Армения», страховые выплаты, страховые возмещения, тарифы.*

В ниже приведенном материале будут подробно рассмотрено информация о собраных страховых выплат за последние три года, выданих возмещении и примененных тарифов двух наиболее крупных компании страхового рынка РА: Росгосстрах-Армения и Инго Армения. Компании осуществляют деятелность «Страхование не жизни».

GRIGOR GRIGORYAN

COMPARATIVE ANALYSIS OF PROPERTY INSURANCE ACCORDING TO THE DATA OF THE LARGEST 2 INSURANCE COMPANIES IN ARMENIA

Key words: *property insurance, Rosgosstrakh-Armenia ICJSC, Ingo Armenia ICJSC, insurance payments, insurance compensations, tariffs.*

In below stated article detailed information will be provided about two biggest insurance companies in Republic of Armenia over the past three years - Rosgosstrakh-Armenia and Ingo Armenia, specifically about their insurance premiums, compensations and existing tariffs. These companies implement non-life insurance activities.

ՆԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *մրցունակության ցուցանիշ, տնտեսական աճ, առաջընթաց, ՀՀ մրցունակության դիրք*

Հոդվածում նկարագրված է Հայաստանի Հանրապետության դիրքը Համաշխարհային մրցունակության զեկույցում: Անդրադարձ է կատարվել 12 հենասյուների ցուցանիշներին, և ներկայացվել են 10 տարվա ընթացքում դիրքի փոփոխության պատճառները: Եզրակացությունները և առաջարկությունները տնտեսության հիմնական մարտահրավերները հաղթահարելու և մրցունակության ցուցանիշը բարձրացնելու նպատակ են հետապնդում:

Համաշխարհային մրցունակության զեկույցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյուների հիման վրա: Ցուցչի հաշվարկման հիմքում վիճակագրական տվյալներ են և ընկե-

ությունների ղեկավարների հարցման արդյունքներ: Վերջիններիս ամենամյա հարցումն իրականացվում է Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) ներառված երկրներում՝ ՀՏՀ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:[1] 2017 թ. ՄՀԶ-ում Հայաստանը 137 երկրների մեջ գրավել է 73-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով 6 կետով: Զգալի առաջընթաց են գրանցել առողջապահություն և տարրական կրթություն, նորարարություն, գործարարության կատարելագործվածություն, ինստիտուտներ և ապրանքների շուկայի արդյունավետություն հենասյուները: Որոշ դրական փոփոխություններ են գրանցել նաև շուկայի չափ, ենթակառուցվածքներ, աշխատուժի շուկայի արդյունավետություն հենասյուների ցուցանիշները: Միևնույն ժամանակ վատթարացել են մակրոտնտեսական միջավայր և տեխնոլոգիական պատրաստվածություն հենասյուների ցուցանիշները:[2] Բիզնես սկսելու հետ կապված գործընթացների քանակը և ժամկետները հաստատուն կերպով մնում են Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում, որում դասվում են նաև հարկման ցածր բեռը և աշխատանքի ընդունման/հեռացման ճկունությունը: Մրցակցային թերություններ առկա են այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսավորումը տեղական կապիտալի շուկայի միջոցով, նավահանգստային ենթակառուցվածքի որակը (այն երկրները, որոնք չունեն ելք դեպի բաց ծով, գնահատում են ամենամոտ նավահանգիստը), արտաքին շուկայի չափի համաթիվը:

Աղյուսակ 1

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	*Տեղ*	*Ուշագրավ թերություններ*	*Տեղ*
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակ	7	Նավահանգստային ենթակառուցվածքի որակ	125
Հարկման ընդհանուր դրույք, % շահույթից	9	ՀՆԱ՝ գնողունակության պարիտետով հաշվարկված, մլրդ դոլար	117
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակ	12	Ներքին շուկայի չափի համաթիվ	116
Աշխատանքի ընդունման ու հեռացման փորձ	26	Ֆինանսավորում տեղական կապիտալի շուկայի միջոցով	115
Շուկայում գերիշխող խմբերի առկայություն	28	Արտաքին շուկայի չափի համաթիվ	113

ՀԱՄ հենասյուների փոփոխության պատճառները տարբեր են: Առաջին հենասյունը՝ ինստիտուտները, իր դիրքը բարելավել է օրենսդրական դաշտի բարեփոխումների շնորհիվ: Կառավարության կողմից հանրային կառավարման ոլորտում նախաձեռնությունները դրական սպասումներ են ձևավորել բիզնեսում: Ցուցանիշների կեսից ավելին գրանցել են դրական փոփոխություն: Հատկանշական է դրական տեղաշարժը հանրային միջոցների կառավարման, որոշումների ընդունման անաչառության, վստահության մակարդակի փոփոխության մեջ:

[1] Տե՛ս ՄՀՀ մամլո հաղորդագրություն 2017 թ.:
[2] Տե՛ս The Global Competitivness Report 2017-2018:

Աղյուսակ 2

Հայաստանի դիրքի փոփոխություններն ըստ հենասյուների

ՀԱՄ հենասյուները	*ՀԱՄ 2017-2018, տեղ 137 երկրների շարքում*	*ՀԱՄ 2007-2008, տեղ 131 երկրների շարքում*	*Փոփոխություն 2007-ի նկատմամբ*
Ինստիտուտներ	55	96	41 ↑
Ենթակառուցվածքներ	80	87	7 ↑
Մակրոտնտեսական միջավայր	101	57	44 ↓
Առողջապահություն և տարրական կրթություն	55	99	44 ↑
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	69	95	26 ↑
Ապրանքների շուկայի արդյունավետություն	35	104	69 ↑
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	51	40	11 ↓
Ֆինանսական շուկայի զարգացածություն	78	110	32 ↑
Տեխնոլոգիական պատրաստվածություն	77	104	27 ↑
Շուկայի չափ	115	111	4 ↓
Գործարարության կատարելագործվածություն	68	115	47 ↑
Նորարարություն	70	94	24 ↑

Ենթակառուցվածքների ցուցանիշը զգալի փոփոխության չի ենթարկվել՝ տնտեսությունը սպասարկող ոլորտներում քիչ ներդրումների պատճառով:

Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի դիրքի վատթարացման հիմնական պատճառը ձևավորված դեֆլյացիոն միջավայրն է: Հայաստանում 2016 թ. գրանցվել է 1.4% գնանկում (դեֆլյացիա), ինչը համարվում է, որ զսպում է տնտեսական աճը, սակայն արդեն 2017 թ. գրանցվել է 2.6% գնաճ: Գնաճի ընդունելի միջակայք է համարվում 0.5-3%-ը:[1] Մակրոտնտեսական միջավայրի դիրքի վատթարացման պատճառներից է նաև աղքատության մակարդակի բարձրացումը, որը կազմել է 29.4%, նաև Հայաստանում առկա է բազմազանեցման (դիվերսիֆիկացման) խնդիր, օրինակ՝ արտահանման ուղղվածություն ունեցող արտադրություններում:

Առողջապահության և տարրական կրթության դիրքը հիմնականում բարելավվել է ոլորտում տեղի ունեցած բարեփոխումների շնորհիվ, նաև փոփոխության հիմնական պատճառ է տարրական կրթության ներգրավվածության ցուցանիշի բարելավումը, որը հետևանք է հաշվառման յուրահատկությունների:[2]

Որոշ դրական փոփոխություններ է գրանցել բարձրագույն կրթություն և վերապատրաստում հենասյան ցուցանիշը: Դա պայմանավորված է ուսանողների քանակի կրճատմամբ, որն էլ իր հերթին կապված է միգրացիայի աճի հետ: Սակայն, այդ ամենի հետ մեկտեղ, վերջին տարիներին զգալիորեն ավելացել են վերապատրաստման ծրագրերը, որոնք նախատեսված են ոչ մի-

[1] https://www.cba.am

[2] http://edu.am/ http://moh.am

այն ուսանողների, այլև դասախոսների համար, օրինակ՝ Erasmus+ ծրագիրը:

Զգալի առաջընթաց է գրանցել ապրանքների շուկայի արդյունավետության հենասյունը, որի գլխավոր պատճառը ԵԱՏՄ-ին անդամակցելն է: Ըստ այդմ, ԵԱՏՄ անդամ երկրների հետ, Հայաստանը գտնվում է ազատ մաքսային գոտում, ինչն էլ հանգեցրել է շուկայի ընդլայնմանը: Գրանցվել է մրցակցության ինտենսիվության աճ, սակագնային կարգավորման և մաքսազերծման ընթացակարգերի բարելավում, սակայն ոչ սակագնային կարգավորման վատթարացում, նաև դրական միտումներ են արձանագրվել գնորդների կատարելագործվածության, ինչպես նաև ընկերություններում շուկայի պահանջներից բխող վարվելակերպի մասով:

Թեև վերջին տարիներին աշխատուժի շուկայի արդյունավետության ցուցանիշը գրանցում է դրական փոփոխություններ, այնուհանդերձ, 10 տարվա կտրվածքով այն նվազել է: Խնդիրն այն է, որ գործազրկության մակարդակը գնալով նվազում է ոչ թե զբաղվածության մակարդակի բարձրացման, այլ միգրացիայի աճի «շնորհիվ»: Գործազուրկներն արտագաղթում են աշխատանք փնտրելու նպատակով, ինչն էլ հանգեցնում է գործազրկության նվազմանը: Սակայն, եթե նորից դիտարկենք 10 տարվա կտրվածքով, ապա կտեսնենք, որ գործազրկության մակարդակն աճել է 1.6%-ով,[1] նաև նվազել են աշխատավարձի և արտադրողականության, աշխատավարձերի սահմանման ճկունության և արհեստավարժ կառավարման ցուցանիշները:

Ֆինանսական շուկայի զարգացածությունը իր դիրքը բարելավել է համաշխարհային ֆինանսական շուկայի կայունության ազդեցության շնորհիվ: Գրեթե բոլոր ցուցանիշներում առկա է բարելավում, սակայն ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը շարունակում է վատթարանալ: Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման և անձնական տվյալների պաշտպանության համակարգի ներդրման արդյունքում Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Իրավունքների պաշտպանության համաթիվը» էապես բարելավվել է:

Տեխնոլոգիական պատրաստվածության ցուցանիշը 2017 թ. ընթացքում նվազել է, որի գլխավոր պատճառը Օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազեցումն է: Ցուցանիշի նվազեցումը կապված է նաև երկրում առկա տեխնոլոգիական խզման հետ, որը տեխնոլոգիաների ուշ փոխանցման և ընկերությունների կողմից դժվար յուրացման հետևանք է: Սակայն, եթե տեխնոլոգիական պատրաստվածության ներկայիս դիրքը համեմատենք 2007 թ. դիրքի հետ, ապա կնկատենք դրական տեղաշարժ, որը կապված է համացանցից օգտվողների թվաքանակի, նորագույն տեխնոլոգիաների առկայության և ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիության հետ:

Շուկայի չափը ներկայացնող ցուցանիշները 10 տարվա ընթացքում ենթարկվել են բացասական փոփոխության, որը մասնավորապես կապված է արտահանման և ներմուծման ծավալի հետ: 2016 թ. գրանցվել է արտահանման աճի բարձր տեմպ, որը պահպանվել է նաև 2017 թ., ինչն էլ գնալով հանգեցնում է շուկայի չափի դիրքի բարելավմանը:[2] Բարելավվել են ներքին շուկայի չափի համաթվի և արտաքին շուկայի չափի համաթվի ցուցանիշնե-

[1] http://armstat.am
[2] http://armstat.am

ը: Դրանց բարձրացմանը նպաստում է նաև Հայաստանի՝ ԵԱՏՄ և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին անդամակցելը:

Գործարարության կատարելագործվածության ցուցանիշները, հատկապես՝ տեղական մատակարարների որակը և քանակը, քլաստերային զարգացումները և մրցակցային առավելության բնույթը, զգալիորեն աճել են: Այս ամենը ընթացակարգերի պարզեցման արդյունք է, որոնց շնորհիվ կրճատվել են բիզնես սկսելու հետ կապված գործընթացների քանակը և ժամկետները:

Նորարարություն հենասյան ցուցանիշը սկսել է նվազել 2008 թվականից, իսկ արդեն 2016-ից գրանցել է կտրուկ աճ:[1] Վերջինս պայմանավորված է SS ոլորտի զարգացման և միջազգային ֆիրմաների կողմից ներդրումների ավելացման հետ: Հատկանշական աճ է գրանցել Կառավարության կողմից առաջադեմ տեխնոլոգիական ապրանքների ձեռք բերումը, գիտնականների և ճարտարագետների առկայությունը նորարարության բնագավառներում:

Մրցունակությունը ներկայումս Հայաստանի պետական այրերի, ինչպես նաև հայաստանյան ընկերությունների առջև ծառացած հիմնական մարտահրավերներից է: Մրցունակության մակարդակից է կախված, թե կկարողանա արդյոք երկիրը կայուն և ներդաշնակ տնտեսական աճ ապահովել: Մինչ այժմ Հայաստանի տնտեսական կատարողականը զգալիորեն կախված է եղել արտաքին գործոններից (դրամական փոխանցումներ, միջազգային ֆինանսական ու նվիրատու (դոնոր) կազմակերպությունների օգնություն):

Գլոբալ շուկայում և միջազգային առևտրում ՀՀ ցածր մրցունակության հիմնական պատճառներն են կոռուպցիան, կառավարչական բյուրոկրատիան, վարկունակության տարբեր համաթվերում ՀՀ ցածր դիրքերը, բիզնեսի ֆինանսավորման աղբյուրների սակավությունը, տնտեսության ենթակառուցվածքների ցածր որակը, ծովային ենթակառուցվածքների բացակայությունն ու մոտակա երկրներում դրանցից օգտվելու սահմանափակումները, շուկայի փոքր չափերը, մակրոտնտեսական ցուցանիշների անբավարար կայունությունը, տեխնոլոգիական պատրաստվածության ցածր աստիճանը, տարբեր ապրանքային շուկաներում հաստատված գերիշխանությունը, հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավետությունը:

ՀՀ տնտեսության հիմնական մարտահրավերներն են՝

1. Աղքատության հաղթահարում և ներառական աճի ապահովում,
2. Նոր տնտեսական հնարավորությունների ստեղծում (նոր արտահանման շուկաներ, ներդրումների հոսք),
3. Ներքին տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում:

1. Սոցիալական արդարության, հավասար հնարավորությունների ու բոլոր անդամներին ներառող հասարակությունը առողջ, հանդուրժող, սոցիալական բևեռացումն ու խտրականությունը բացառող հանրույթ ունենալու գրավականն է: Այս ոլորտում առաջնային նպատակներն են.

- ապահովել բնակչության եկամուտների իրական աճ, ամրապնդել սոցիալական պաշտպանության համակարգը, վերականգնել սոցիալական արդարությունն ու սոցիալական խախտված իրավունքները, պաշտպանել անապահով խավերի աշխատանքային իրավունքը և, ի վերջո, աշխատավարձերի

[1] Տե՛ս ՄՀՋ ամփոփագիր 2008-2009 թ.:

բարձրացման, եկամուտների արդարացի բաշխման և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով հասնել աղքատության էական կրճատման:

2. Համաշխարհայնացման արդի պայմաններում տնտեսության առաջանցիկ զարգացման համար օրախնդիր են գերակա ոլորտ ճանաչված տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների զարգացմանը և համաշխարհային շուկայում ՀՀ մրցակցային դիրքերի ամրապնդմանը միտված արմատական քայլերը, տեղական հումքի վրա հիմնված ռեսուրսախնայողական ու գիտատար արդյունաբերության զարգացման խթանումը:

Այս ամենի իրագործման համար անհրաժեշտ է.

- մշակել և կիրառել ներդրումների խթանման կառուցակարգեր՝ համապատասխանեցված գլոբալ ընկերությունների կարիքներին (օրինակ՝ մարդկային ռեսուրսների, ենթակառուցվածքների զարգացման համաֆինանսավորում),
- խթանել վերջնական արտադրանքին ուղղված տեխնոլոգիատար արտադրության զարգացումը, ապահովել գիտահետազոտական ու փորձարարական-նախագծային աշխատանքներին հատկացվող ծախսերին պետության և մասնավոր հատվածի մասնակցությունը,
- հիմնել կիրառական, գիտական լաբորատորիաների մասնագիտացված ցանց, որոնք մշակումներ կկատարեն տնտեսության գերակա ուղղություններում նորարարություններ ու նոր տեխնոլոգիաներ ներդնելու համար:

3. Հայաստանի տրանսպորտային ոլորտը կարևոր դեր է կատարում ազգային տնտեսությունում, ինչը սահմանափակված է աշխարհագրությամբ և միջազգային քաղաքականությամբ: Հետևաբար նշանակություն է ձեռք բերում երկրի անբավարար տրանսպորտային ցանցի բարելավումը՝ նվազեցնելու համար տրանսպորտային և առևտրային ծախքերը և ըստ այդմ ավելացնելու եկամուտ վաստակելու հնարավորությունները:

Այս ոլորտը բարելավելու ճանապարհին ներդրումները երկաթուղային և ճանապարհային ցանցերի կառուցման ու պահպանման մեջ զգալիորեն կկրճատեն բեռնափոխադրման ծախսերը: Տարածաշրջանային ենթակառուցվածքային ինտեգրման ռազմավարությունը առևտրային նոր ուղիների զարգացման և ծովային ելք չունեցող երկրներին միջազգային շուկաների ընդլայնված հասանելիության հնարավորություն կտա: Ենթակառուցվածքային ինտեգրումը ներդրումներ է պահանջում նաև նոր նավահանգիստների կառուցման և պահպանման մեջ, ինչը կծառայի ամբողջ տարածաշրջանին: Տարածաշրջանային ինտեգրացիոն ռազմավարությունը պետք է ուշադրություն դարձնի նաև վարչական համակարգմանը:

НАНЕ ГРИГОРЯН

АНАЛИЗ ПОКАЗАТЕЛЕЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ РА

Ключевые слова: *показатель конкурентоспособности, экономический рост, прогресс, конкурентоспособное положение РА.*

В статье описывается положение Республики Армения в Международном докладе конкурентоспособности. Были затронуты показатели 12 опорных пунк-

тов и представлены причины изменения положения за 10 лет. Сделаны выводы и предложения для преодоления основных вызовов экономики и повышения показателей конкурентоспособности.

NANE GRIGORYAN

ANALYSIS OF GLOBAL COMPETITIVENESS INDICATORS OF RA

Key words: indicator of competitiveness, economic growth, progress, competitiveness of the RA.

The article describes the position of the Republic of Armenia in the Global Competitiveness Report. The indicators of 12 pillars of competitiveness were touched upon and the reasons for the change in the situation over 10 years were presented. Conclusions and proposals were made to overcome the main challenges of the economy and increase competitiveness indicators.

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Զբոսաշրջության կառավարում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ՎՐԱՍՏԱՆ. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, զբոսաշրջային մուտքեր, հյուրանոցային արդյունաբերություն, ժամանումներ, ռազմավարություն, ներդրումներ*

Այսօր զբոսաշրջության ոլորտն իր ենթակառուցվածքներով կարևոր տեղ է զբաղեցնում շատ երկրների տնտեսության մեջ: Հոդվածում ներկայացվում է Վրաստանի զբոսաշրջության դերը և նշանակությունը, վերլուծվում են զբոսաշրջության զարգացման շարժընթացը, ծառայությունների ոլորտը, քննարկվում են զարգացման հիմնական քայլերը:

Այսօր զբոսաշրջության ոլորտը խոշորագույն արդյունաբերություններից մեկն է, որն ունի համաշխարհային տնտեսական մեծ ներուժ: Վրաստանի տնտեսության մեջ այն նշանակալի դեր ունի ապրանքների և ծառայությունների արտադրության առումով: Երկրի կառավարությունը զբոսաշրջությունը սահմանել է որպես զարգացման հիմնական ոլորտներից մեկը և օրեցօր մեծացնում է ջանքերը: Վրաստանի Ազգային զբոսաշրջության վարչությունը մշակել է գովազդային արշավներ՝ ներքին և միջազգային շուկաներում և ակտիվորեն մասնակցում է միջազգային զբոսաշրջային տոնավաճառներին: Նպատակ ունենալով շարունակել զբոսաշրջության ոլորտի դրական զարգացումը՝ Վրաստանում կատարվել են արմատական բարեփոխումներ: Կառավարությունը հայտարարել է, որ նպատակ ունի առաջնահերթ դարձնել ենթակառուցվածքների զարգացումը:

Վերջին տասնամյակում ԱՊՀ և Մերձավոր Արևելքի այցելուների համար Վրաստանը քիչ հայտնի վայրից վերածվեց մրցակցային տարածաշրջանային զբոսավայրի, որը մեծ հեռանկար ունի՝ ավելի շատ զբոսաշրջիկներ ներգրավելու Եվրոպայից ու Ասիայից: Բարեփոխումների ալիքը սկսվեց 2003 թ., երբ բարձր հանցագործ և կոռուպցիոն երկիրը դարձավ աշխարհում ամենա-